ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2022 թվականի հոկտեմբերի 13-ի, ժամը 14:00-ի նիստի
N 2 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսական հաշվառման ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով** («Հայաստանի Հանրապետություն» 01.09.2022, N 144) **ֆինանսական հաշվառման ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հայկ Գերասիմի Մնացականյանի** ռեկտորին ուղղված դիմումի մասին հարցը:

Զեկուցողներ՝ ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Դ.Ռ.Գալոյան** և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ, հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» **Ա.Հ.Սարգսյան**:

Զեկուցողները նշեցին. «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2022 թվականի սեպտեմբերի 1-ի N 144 համարում հայտարարվել է մրցույթ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսական հաշվառման ամբիոնի վարիչի** թափուր պաշտոնի համար, որին կարող են մասնակցել ամբիոնի մասնագիտական ուղղվածությանը համապատասխան գիտությունների դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան, պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում ունեցող անձինք, որոնք ունեն առնվազն 5 տարվա բուհական գիտամանկավարժական աշխատանքի ստաժ: Ֆինանսական հաշվառման ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով 2022 թվականի սեպտեմբերի 20-ին ռեկտորին դիմում է ներկայացրել ֆինանսական հաշվառման ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Հայկ Գերասիմի Մնացականյանը**: Ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգով» սահմանված պահանջներին համապատասխան ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը:

Հ.Գ.Մնացականյանը ծնվել է 1976 թվականի ապրիլի 28-ին Երևանում: 1993 թվականին ավարտել է Երևանի թիվ 172 անգլերենի խորացված

ուսումնասիրությամբ միջնակարգ դպրոցը: 1999 թվականին գերազանցության դիպլոմով ավարտել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը՝ ստանալով տնտեսագետի որակավորում «Ընդհանուր տնտեսագիտություն» մասնագիտությամբ: 1998 թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի արտադրությունից կտրված ասպիրանտուրա «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտությամբ և 2001 թվականին ազատվել է ասպիրանտուրայից ատենախոսությունը պաշտպանելու և ժամկետը լրանալու կապակցությամբ::

Հ.Գ.Մնացականյանը 2001 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման միտումները և հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով և ՀՀ ԲՈՀ-ի (ներկայում՝ ՀՀ ԲՈԿ) կողմից նրան շնորհվել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2007 թվականին ՀՀ ԲՈՀ-ի կողմից նրան շնորհվել է դոցենտի գիտական կոչում «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ: 2012 թվականին նա պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Աուդիտորական գործունեության զարգացման հիմնախնդիրների լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով և 2013 թվականի մարտի 22-ին ՀՀ ԲՈՀ-ի կողմից նրան շնորհվել է տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան: 2017 թվականին ՀՀ ԲՈՀ-ի կողմից նրան շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ: Տվյալ բնագավառում նա ունի հրատարակված ինչպես գիտական, այնպես էլ ուսումնամեթոդական աշխատանք, որոնց ընդհանուր թիվը 60 է (3 ուսումնամեթոդական ձեռնարկ, 57 գիտական հոդված, այդ թվում 14-ը՝ տպագրված միջազգային գիտական ամսագրերում):

Աշխատանքային գործունեությունը: Հ.Գ.Մնացականյանը 17.03.1999 - 03.01.2000 թթ. աշխատել է ՀՀ փոստի և հեռահաղորակցության նախարարության ֆինանսատնտեսագիտական վարչության միջազգային բաժնի պետ, 03.01.2000 - 14.06.2000՝ ՀՀ փոստի և հեռահաղորակցության նախարարության միջազգային հարաբերությունների վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար, 15.06.2000 - 01.10.2002 թթ.՝ Զարգացման հայկական բանկի վարկավորման և ինվեստիցիաների բաժնում որպես գլխավոր մասնագետ (համատեղությամբ): 2001 թվականի սեպտեմբերի 1-ից աշխատում է Երևանի պետական համալսարանի ֆինանսահաշվային ամբիոնում՝ ասիստենտ, դոցենտ, պրոֆեսոր, իսկ 2008-2022 թթ.՝ ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ: Հ.Գ.Մնացականյանը 2022 թվականի օգոստոսի 26-ին նշանակվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսական հաշվառման ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար:

Հ.Գ.Մնացականյանը 2004 թվականից Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիայի թղթակից անդամ է, 2009-2021 թթ. ղեկավարել է

հաշվապահների և աուդիտորների որակավորման ծրագիրն իրականացնող կենտրոնը. այնուհետև՝ Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատը: 2015 թվականից Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալության խորհրդի անդամ է: Մասնագիտական գործունեության համար պարգևատրվել է Երևանի պետական համալսարանի շնորհակալագրով, իսկ 2014 թվականին՝ բարձրագույն պարգևով՝ ոսկե մեդալով:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսական հաշվառման ամբիոնի 2022 թվականի հոկտեմբերի 3-ի նիստում (արձանագրություն N 3) քննարկվել է ֆինանսական հաշվառման ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին դիմած հավակնորդ Հ.Գ.Մնացականյանի՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի» 14-րդ կետի համաձայն ներկայացրած ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագրի, հավակնորդի մասնագիտական բնութագրի, գիտամանկավարժական գործունեության արդյունքների և ամբիոնի վարիչի պաշտոնին հավակնորդի համապատասխանության մասին հարցը: Նիստը նախագահել է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա.Վ.Գրիգորյանը: Հավակնորդի վերաբերյալ դրական կարծիքներով ելույթ են ունեցել պրոֆեսոր Ա.Ա.Հակոբյանը, դոցենտներ Ա.Հ.Սարգսյանը, Գ.Գ.Կոստանյանը: Նրանք նշել են, որ ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդը շուրջ 20 տարի աշխատանքներ է իրականացնում մասնագիտական ոլորտում, հանրապետությունում ճանաչված մասնագետ է, մշտապես զբաղվում է գիտահետազոտական գործունեությամբ և այս ամենը իր դրական ազդեցությունը կունենա ամբիոնի հետագա գործունեության մեջ: Ելույթներից հետո ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդի երաշխավորության մասին հարցը դրվել է ամբիոնի նիստի բաց քվեարկությանը: Քվեարկության արդյունքների հիման վրա (կողմ՝ 18, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1: Ձեռնպահ է եղել Հ.Գ.Մնացականյանը՝ հնարավորինս շահերի բախումից զերծ մնալու համար) ֆինանսական հաշվառման ամբիոնը երաշխավորել է Հ.Գ.Մնացականյանի թեկնածությունը ներկայացնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ ֆինանսական հաշվառման ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

Հարցը քննարկվել է նաև գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի՝ 2022 թվականի հոկտեմբերի 6-ի նիստում (արձանագրություն N 12), որտեղ բաց քվեարկության արդյունքների հիման վրա (կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) որոշվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսական հաշվառման ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հայկ Գերասիմի Մնացականյանի թեկնածությունը ներկայացնել Հայաստանի պետական

տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

Զեկուցողներից հետո Հայկ Գերասիմի Մնացականյանը ներկայացրեց բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագիրը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գիտական խորհուրդը որոշեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսական հաշվառման ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հայկ Գերասիմի Մնացականյանի թեկնածությունը դնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ ֆինանսական հաշվառման ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն (գիտական խորհրդի 60 անդամից նիստին ներկա էին 58-ը. կողմ՝ 57, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0: Քվեարկության պահին դահլիճում չէր Մ.Ս.Մելքումյանը):

ՈՐՈՇԵՑԻՆ.-

Հիմք ընդունելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2017 թվականի մարտի 17-ի նիստում (արձանագրություն N 7) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի 35-րդ կետը, ֆինանսական հաշվառման ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի ընտրության նպատակով գիտական խորհրդի նիստում ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի N 3 արձանագրությունը և փակ գաղտնի քվեարկության արդյունքները (**կողմ՝ 57, դեմ՝ 1, անվավեր քվեաթերթիկ՝ 0**)՝ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսական հաշվառման ամբիոնի վարիչի թափուր պաշտոնում համարել ընտրված տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հայկ Գերասիմի Մնացականյանին**:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2022 թ. հոկտեմբերի 13
Երևան